

եւ ճայթմունք լարից աղեղանցն¹ զլսելիս² ամենեցուն առ հասարակ խլացուցանելին³:

137 Անդ էր տեսանել շտապ⁴ մեծի տագնապին⁵ եւ զաղետս անբաւ⁶ տարակուսանացն⁷ երկոցունց⁸ կողմանցն⁹ առ ի յանդուզն¹⁰ յարձակմանէն¹¹ զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն¹² յիմարէին եւ վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին եւ նահատակքն¹³ գոչէին: 138 Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեան¹⁴՝ զգետն¹⁵ ի մէջ փակէին, եւ զանգիտեալ գունդն¹⁶ Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեան զեռալ¹⁷ սկսան: 139 Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ¹⁸ծի ի վերայ¹⁹ առեալ յարձակէին²⁰ մեծաւ զաւրութեամբ. սաստկապէս բախեալք²¹ ընդ միմեանս²², յերկոցունց կողմանց²³ բազում վիրաւորք²⁴ յերկիր անկեալ դիաթաւալ²⁵ խաղային:

140 Յայնմ մեծ²⁶ տագնապի²⁷ ի վեր հայեցաւ ²⁸քաջն Վարդան, եւ²⁹ տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց³⁰ Պարսից զաւրուն, զի զճախա-

1 Կ աղեղնաւորաց α աղեղանց

2 ԵԺԽ զլսելիսս

3 Դ խլացուցանէր

4 ԵԺ¹⁷ զըշտապ Հ α զշտապ

5 Բ α տագնապի

6 ԵԸԺԽ Հ չիք անբաւ

7 α տարակուսանաց

8 Գ երկեցունց

9 Է կողմանց

10 ԶԷ յանդուքն Մ յանդունգն

11 ԳԼԿ յարձակմանն

12 ԸԽ չիք յիմարէին եւ վատասիրտքն

13 Բ նահատակք

14 Ե Հ բազմութեան

15 Հ գետն

16 ՍԶԷԹ Վ զօրսն փիս Գունդն ԺԻ զօրքն (Ժ լուսանցքում՝ գունդն) ԲԺ¹ $\alpha\beta$ գնդին

17 ԲԴԺ¹ $\alpha\beta$ զեռեալ ԾՏ¹ զեռել

18 ԼՏ¹ չիք ծի ի վերայ առեալ յարձակէին

19 ԴՏ² Ժ¹ $\alpha\beta$ ի վեր

20 Թ արձակէին

21 ԳԴԵԿ Հ բախեալ

22 ԲԺ¹ $\alpha\beta$ բախեալ զմիմեանս

23 ԲԴ α երկոցունց կողմանցն ԵԺԺ¹ կողմանցն

24 ԳԵԺ վիրաւորս

25 α դիաթաւալ

26 Խ յայնժամ մեծ ԲԳԴԽԼՏ¹ Տ² α մեծի

27 ՍԵԶԷԸԹՎՏ³ Ա մեծ տագնապի Դ α տագնապին

28 ԲԺ¹ $\alpha\beta$ իսկ քաջն Վարդան մեծաւ ուժով

29 ԲԳԴԵԺԼԽԿՏ¹ Տ² $\alpha\beta$ չիք եւ

30 ՍԳԴԶԷԹԻԿՎ նահատակացն